ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 դեկտեմբերի 2013թ. թիվ 352-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ԵՎ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետի «ա» ենթակետով, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 34 հոդվածի, հաշվի առնելով ՀՀ Ազգային անվտանգության ծառայության 09.12.2013թ. թիվ 39/5691 գրությունը՝

Որոշում եմ.

1. Հարուցել վարչական վարույթ և իրականացնել «ՀՀ Լոռու մարզի Կաթնաղբյուրի միջնակարգ դպրոց», «ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի Վ.Թեքեյանի անվան N 6 միջնակարգ դպրոց» և «ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի Սուրբ Գրիգոր Լուսավորչի անվան N 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ների տնօրեններին օրենքով վերապահված լիազորություններ վերահսկողություն:

2. Վերը նշված գրությամբ արձանագրված փաստերի ստուգման համար ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:

3. Մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝

Սույն որոշման մասին եռօրյա ժամկետում պատվիրված փոստով ծանուցել վարչական վարույթի հետևյալ մասնակիցներին՝ «ՀՀ Լոռու մարզի Կաթնաղբյուրի միջնակարգ դպրոց», «ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի Վ.Թեքեյանի անվան N 6 միջնակարգ դպրոց», «ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի Սուրբ Գրիգոր Լուսավորչի անվան N 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ների տնօրեններին:

4. Աշխատանքային խմբի գործունեության վերահսկողությունը վերապահում եմ ինձ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2013թ. դեկտեմբերի 27
ք.Վանաձոր